ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2020թ. թիվ 569-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2019Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻԹԻՎ 594-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով կադրային փոփոխությունները և «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի 03.08.2020թ. թիվ 183 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. հոկտեմբերի 11-ի «Ուղեգրող հանձնաժողովներ ստեղծելու և ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 429-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 594-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Ք.Վանաձոր և Գուգարքի տարածաշրջան» մասում «Գոհար Դանիելյան - հանձնաժողովի քարտուղար, «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի տեղակալ» բառերը փոխարինել «Սյուզաննա Բալայան - հանձնաժողովի քարտուղար, «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի փոխտնօրեն» բառերով:

2) «Ստեփանավանի տարածաշրջան» և «Սպիտակի տարածաշրջան» մասերում «Աննա Գուլանյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ» բառերը փոխարինել «Աննա Գուլանյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. օգոստոսի 4
ք.Վանաձոր